

ղորմութիւն իւր յիշել . այլ քան զկարն մեր առաւել զոք ոչ փորձէ Տէր եւ ընդ փորձութեան զելսն ցուցանէ զեղօք, որպէս ասէ առաքեալն : Բայց մեք յուսով ապրիմք, զի Որ յուսայ ի Տէր՝ որպէս զլեառն Սիոն ոչ սասանին յաւիտեան, եւ ոչք յուսան յողորմութիւն նորա՝ փրկին ի մահուանէ սովու, քանզի ուղորմութիւնք Տեառն անսպառ են եւ ոչ նուազին զթութիւնք նորա, քանզի որ առապեցոյցն՝ նոյն եւ կարող է ողորմիլ եւ արգահատել, որ եհարն՝ նոյն եւ կարող է առ ի բշչիել : Սակայն պարտիմք միշտ խընդրել ի մարդասիրութենէն, զի նախախնամական զըթութիւն իւր արասցէ ի վերայ քո քաղցրութեամբ, քանզի եւ արգահաս են ողորմութիւնք նորա առ համբերողս, որպէս Դաւիթ ասէ . Համբերելով համբերի Տեառն եւ լուաւ աղօթից իմոց, եւ առաքեալն ասէ . Ահաւասիկ երանեմք համբերողաց . Չհամբերութիւն Յորայ լուարուք եւ զկատարումն Տեառն տեսէք : Եւ ոչ միտեմք ի նոյն բան զոր Դաւիթ ասէ . Ընդէ՞ր բնաւ երկնչիմ ես յաւուր չարի, զի անօրէնութիւնք զնացից իմոց շուրջ եղեն զինեւ, այսինքն դատաստան թէպէտ արգար դատեցաւ՝ այլ զի՞նչ եւս մաղթեցից նմա : Այլ յայն բան արիարար զարթնուցուք զգաստութեամբ մաղթել թէ՛ Տէր մի՛ յանդիմաներ զիս սրտմտութեամբ եւ մի՛ խրատեր զիս բարկութեամբ : Չմանասէին բան առեալ ի բերան այսու եւեթ քաղցրացուցուք զգթութիւն ներողին, որք զղջան առ նա ասելով . Անբաւ է մեծվայելչութիւն փառաց քոց, սաստիկ է բարկութիւն սպառնալեաց քոց ի վերայ մեղաւորաց, անչափ եւ անքնին են ուղորմութիւնք անտեաց քոց . զի Աստուած ապաշխարողաց է Աստուած, որպէս խոստացաւ մարգարէիւն՝ Թէպէտ խոտորնակին խոտորնակ եմ եւ Աստուած նախանձոտ եմ, բայց ոչ կամիմ զմահ մեղաւորին,